

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաննարք եւ հասակը: Յաճախ կարելի է նկատել, որ խելքով ու տաղանդով օժտուած են լինում կարճահասակ մարդիկ. հանճարները, որոնց մասին խօսում է քաղաքական և կուլտուրական պատմութիւնը, եղել են նոյնպէս զարմանալի կարճահասակներ: Այսպէս, Պետական մարդկանցից և զօրավարն էր ից — Ատիլան, Կրօմվելը, Ֆրիդրիխ II, Նապօլէօն, Գամբետա, Թիեռ, բոլորը փոքրահասակ կամ միջահասակից ցածր են եղել: Յիսուս Բրիտտոսի մասին Թալմուդն ասում է, որ շատ կարճահասակ է եղել, Պօղոս առաքելայն էլ բարձրահասակ չի եղել: Լիւտերը եղել է միջահասակ և շատ գէր: Նկարիչներին Թաֆայէլը կարճահասակ էր, Միքէլ-Անջելօն միջահասակ, Ադոլֆ Մենցելը՝ կարճահասակ: Միւս կողմից Տիցիանն և Լէօնարդօ դա Վինչին աչքի էին ընկնում իրանց բարձր հասակով: Դաշնական արևելքից և երաժիշտներից բոլոր հանճարները, բացի Գենտելից, կարճահասակ էին. Բախ, Հայդէն, Մօցարտ, Թեթհովէն, Ռիխարդ Վագներ խիստ կարճահասակ էին: Բանաստեղծներից և գրողներից միջահասակ էր Դանտէն, կարճահասակ՝ Հօրացիա, Սերվանտէս, Քարլէ. Բարձրահասակ՝ Պետրարկան, Բօկկաչիօն և Տասսօն: Մուսօն խիստ կարճահասակ էր, Վիկտօր Հիլգօն՝ նոյնպէս: Հէյնէն և Հենրիխ Ծօն Կլէյստը աչքի էին ընկնում ոչ մեծ, բայց գէր մարմնակազմով: Փիլիսոսիաներից և բնագէտներից Սպինօզան կարճահասակ էր, Նիւտօնն ու Լէյբնիցը՝ միջահասակ, Կանտը՝ շատ կարճ, Շօպենհաուէրը՝ ոչ բարձր, Գեդելը՝ միջահասակ, Մանիէ և Մոմսեն՝ ոչ բարձրահասակ: Առհասարակ բոլոր ասպարէզներում և նոյն խօսքի դպրոցում շատ յաճախ աւելի խելօքները լինում մեծ հասակ չունեցողները:

Այս ուշադրաւ երևոյթը դօկտօր Է. Պօպպեր մանրամասն ուսումնասիրել է իւր յօդուածում՝ որ զետեղուած է «Politisch — antropolog. Revue» 1907 թուի № 8-ում: Յայտնի շախմատ խաղացող Վիլհէլմ Ստէյնիցին, որ շախմատանց կարճ ոտներ ունէր, դիտելով նա եկաւ այն եզրակացութեան, որ այս խնդրում նշանակութիւն ունի իրանի կամ մարմնի վերին մասի երկարութիւնը առանձին առած, կամ ոտների համեմատութեամբ:

Այս միտքը նա հաստատում է և Հոմերոսի Եղիականից օրինակ բերելով: Այնտեղ ասուած է, որ երբ Աքիլէան ու Ոգի-

սևսը կանգնում էին կողք կողքի, Աբելէսը բաձր էր երևում, իսկ երբ նստում էին, Աբելէսը կարճ էր երևում: Նոյն բանն է նկատում, երբ խելօք մարզիկ, սրոնք համեմատաբար բարձր հասակ չծուեն, նստում են աթոռի վրա, երևում են աւելի բարձրահասակ, քան բարձրահասակները, որոնք թոյլ ընդունակութիւն ունին: Հետեւաբար, եզրակացնում է Պօպպեր—որքան մարդու իրանը երկար է, այնքան նա խելօք և տաղանդաւոր է (Գերօթէ, Բիսմարկ, Լասսալ):

Անկասկած է, ուղեղի հետ միասին պիտի ուշադրութիւն դարձնել ամբողջ մարմնակազմի վրա: Մինչև վերջին ժամանակները սովորաբար այդ մասին ուշադրութիւն չի դարձրած և գուցէ այդ է պատճառը, որ հանճարաւոր մարդկանց ուղեղի ոլորների ուսումնասիրութիւնը, ծանրութիւնը, ծաւալի չափերը իրանց նպատակի չեն հասել: Աւստի դպրոցական աշակերտների վրա ըժշկական—մանկավարժական—հոգեբանական ուսումնասիրութիւն կատարելու ժամանակ ցանկալի է միշտ ի նկատի ունենալ ըժ. Պօպպերի առաջ բերած զիտողութիւնը: Նա անկասկած նշանակութիւն կունենայ նա և ցեղաբանական առեղծուածները լուծելու համար:

„B. 3.“

Չայլամբուծութիւնն նոր Զեյանդիայում. Չայլամի հայրենիքը Աֆրիկան է, ուր նոքա վայրենի դրութեամբ թափառում են անապատներում: Եւրոպացի գաղթականները վերաբնակելով Աֆրիկայում, առանձին եռանդով հետամուտ էին լինում Չայլամներ որսալուն, որովհետև նրանց փետուրները Եւրոպական շուկայում մեծ գնով էին վաճառուում: Երբ Եւրոպացիք նկատեցին, որ շարունակ որսալով այս վաղող թռչնի սերունդը պակասում է, 1864 թւին փորձեցին նրանց ընտանեցնել և խնամք տանել և այդ բանը խիտ աջողութեամբ գլուխ եկաւ, այնուհետև Չայլամների ամբողջ երամներ պահելը դարձաւ յատուկ պարագմունք: Սրանց ընտանեցնելը այնքան աջող էր, որ 1880 թւին Չայլամների ամբողջ երամը գնահատուում էր 80 միլիօն ուրբլի, իսկ նրա արտահանած փետուրների թիւը՝ մի միլիօն հատի:

Մինչև վերջին ժամանակները այն կարծիքն էր տի-

րում, թէ ջայլամները Աֆրիկայից դուրս չեն աճիլ, բայց Ջոն Բ. Մերրիտը «Australasian Review of Reviews» թերթի մէջ նկարագրում է Նոր-Ջելանդիայում ջայլամների աճեցողութիւնը, նա ասում է.—Առաջին անգամ Նոր-Ջելանդիա բերեցին 31 ջայլամ, բայց մի քանի տարուց յետոյ այնքան աճեցին, որ 1902 թւին ջայլամների շահագործութեան համար հիմնուեց Յելուետեան ընկերութիւնը 200,000 ու դրամագլխով, ներկայումս այնտեղ հաշոււմ է 662 ջայլամ:

Տեղի և կլիմայի փոփոխութիւնը յիրաւի ազդում է նրանց աճեցողութեան վրայ, բայց շատ աննշան: Ներկայումս երկու մեծ ագարակներ Աւստրալիայում ունեն հազարից աւելի ջայլամ:

Մերրիտը հերքում է ընդհանրացած այն կարեւոր, թէ ջայլամներ—ծնողները հոգ չեն տանում իրանց ձագերի վրա: Նա ասում է, որ միշտ ենթադրուել է, թէ ջայլամը ձուն գնում է գետնում քանդած փոսերի մէջ, ծածկում է աւաղի շերտով և թողնում է, որ հարաւային տաք արևի ազդեցութեամբ ձագերը դուրս գան: Ս. գրքի մէջ ջայլամն յիշում է իբրև չար թռչուն, անհոգ գէպի իր սերունդը. մինչդեռ ջայլամները խիստ ջանասիրութեամբ թուխս են նստում և արուն գիշերները փոխարինում է էգին, իսկ էգը նստում է ամբողջ ցերեկը:

Երեք ամսական ջայլամը արժէ 50 ուռլի, իսկ հասուն արու և էգը, միասին գնահատուում են մինչև 1500 ուռլի:

H. Br.

1907 Թւին երկրագնի վրա եղած հեռախօսների քիւր. 1907 Թւի յունուարի 1-ին ժողոված տեղեկութիւնների համեմատ հեռախօսական գործիքների թիւը երկըրների մէջ բաժանուած էր հետևեալ ձևով:

Միացեալ Նահանգներում	—5,068,800	հատ կամ	68,50%
Կանադայում	130,000	«	» 1,70%
Եւրոպայում	2,000,000	«	» 27,10%

Միւս բոլոր երկրներում	200,000	«	»	2,70%
Ընդամէնն	7,398,800			100%

Այս թւերը մտաւոր են, որովհետեւ շատ դժուար է հեռու տեղերից ճիշտ տեղեկութիւններ ստանալը, բացի այդ, այն երկրներում, ուր հեռախօսի ցանցը կառավարութեան ձեռքին է, տեղեկութիւնները խիստ դանդաղում են:

Վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ 1903 թւից մինչև 1907 թիւը միացեալ նահանգներում գործող մի ընկերութիւն իր բաժանորդների թիւը աւելացրել է 119 0/0-ով, իսկ միւսը՝ 110 0/0:

Եւրոպայում հեռախօսի գործիքների պահանջը կըրկնապատկուում է 6-7 տարէն վրա, այսինքն շատ դանդաղ, քան Ամերիկայում:

Գերմանիայում այս տարուայ սկզբին գործում էր 678,855 հեռախօսային գործիք, իսկ Մեծ-Բրիտանիայում՝ 481,018:

Եւրոպայում 425 միլիօն ազգաբնակութիւնը գործ է ածում միացեալ-նահանգների 86 միլիօն ազգաբնակութեան գործածած հեռախօսային ապարատների միայն 40 0/0-ը:

Էլէկտրոնի Կովկասում: Ռուսաց կառավարութեան առաջարկուած է էլէքտրական երկաթուղու մի նախագիծ կովկասեան լեռների միջով Բեսլան կայարանից Վլադիկաւկազի վրայով դէպի Տփլիս 230 վերստ երկարութեամբ: Կառուուելուցուձը պիտի աւարտուի մենաշնորհն ստանալու օրից 4 1/2 տարուայ ընթացքում և մենաշնորհը տեւելու է 80 տարի:

ժանտախտի մեծ նամանաբակի ազդեցութիւնը.

Ժանտախտի մեծ համաճարակումները ոչ միայն շատ մարդկանց են գերեզման իջեցնում, այլ և խոր հետքեր են թողնում կենդանի մնացածների վրա: Այս հետքերը շատ որոշ են և նման զանազան ժամանակներում նրանք գըլխաւորապէս ունենում են հոգեբանական և հասարակական ընաւորութիւն: Կենդանի մնացածներից շատերը չեն

կարողանում ամենի այն ցնցող տեսարանները, որոնք կատարում են իրանց շուրջը և ժանտախտի պատճառած կեանքի փոփոխութիւնը ահագին ազդեցութիւն է թողնում նրանց վրա: Մինչ այդ լուրջ և հանգիստ մտածողութիւնը դառնում է յոգնած, խանգարուած և հիստերիքական: Առաջ է գալիս գրգիռ և կասկածամտութիւն, որոնք յաճախ փոխուում են տեսիլքների, լուսնատրութեան և այլ անսակի երևոյթների, որոնք մի քանի դէպքում դառնում են վտանգաւոր և վարակիչ: Այս փոփոխութիւնը յանկարծական չի լինում. բնական քաջութիւնը, հոգատարութիւնը գէպի հիւանդները, յոյսը և կրօնական վրստահութիւնը, որոնք յատուկ են տուղջ ուղեղին, սկզբում անփոփոխ են լինում, բայց յետոյ այս յատկութիւնները միանում են զօրեղ աստուածաշտութեան, ածուց կրօնական եռանդի և չափազանց խոր յուսահատութեան հետ: Սրանց հետևում է սարսափելի երկիւզ և զգացմունքի կատարեալ յեղաշրջումն, երբ իբրև գերակշռող յատկութիւն երևան են գալիս երկիւզ, եսականութիւն, բրտութիւն և անարտութիւն:

Ժանտախտն աւելի քան մի այլ գոթադրութիւն ճրգտում է ժամանակաւորապէս հրապարակ հանել ժարդկութեան թոյլ կողմերը և շատ հազիւ նրա արժանիքները: Հեկկերը նկարագրում է այն խելացնորութիւնն ու կատաղութիւնը, որ հետեանք էր նշանաւոր Եսե մահիւ պատճառով մուււր լարուածութեան:

Նա նկալագրում է Գերմանիայում, Վենդրիայում, Լեհաստանում, Բօհեմիայում, Սիլեզիայում և Ֆրանդրիայում խարաղանդների գործողութիւնը: Նրանք պատում էին քաղաքի մէջ լաւ կազմակերպուած թափօրներով և ունէին երեքական խարաղան երեք չորս տեղից հանգուցած և երկաթի սուր կտորներ հագցրած, որոնցով նրանք իրանց ձաղկում էին: Սկզբում նրանք լինելով անշառ ժարդիկ և տեղտեղ ցանկալի հիւր, յետոյ դարձան սարսափելի այն դիւղերում, ուր երևում էին: Ապա նա նկարագրում է խելագրական պարելու համաճարակը, նոյնպէս և մո-

լեռանդ հալածանքն ու մասսայական արիւնալից ջարդը հրէաների դէմ, որոնց մասին ասում էին, թէ ջրհորները թունաւում են ժանտախտ առաջացնելու համար:

Նա ասում է... 1348 թւի աշնանը թունաւորելու զրոյցի սարսափը բռնել էր բոլոր ժողովուրդներին, Գերմանիայում՝ բոլոր աղբիւրներն ու ջրհորները ծածկեցին առանձին շէնքերով, որ ոչ ոք խմելու և կերակրի համար ջուր չվերցնի այն տեղերից և երկար ժամանակ շատ քաղաքների և դիւղերի բնակիչներ հարկադրուած էին խմել միայն գետի և անձրևի ջուր...:

Այսպիսի զրկանքների ծանր դրութիւնը, անվստահութիւնը, և կասկածատութիւնը առաջացնում է տեղութիւն և դէպի ենթադրեալ թունաւորողները և այդ դուրս է ժայթքում ժողովրդական ինքնադատատանի ձեւով, որ իր հերթին էլ աւելի բորբոքում էր ամենավայրենի կրքերը: Պենջաբում (Հնդկաստան) անգլիացիների ձեռքով ջրհորների թունաւորելու կասկածն ու տրտունջը մտերտեղի ունեցած ժանտախտի ժամանակ, հաստատում են այն ինքնաներշնչումն, որ թագաւորում էր տասն և չորսորդ դարու մեծ ժանտախտի օրերում:

Բացի այս մտաւոր խանդարումներից, եղել են և այլ համաճարակների հետքեր: Ամբողջ հասարակական կարգը խախտուել է այն պատճառով, որ ահագին տարածութիւններ ամոյացել են և շատ տներ ու դիւղեր անմարդաբնակ են դարձել: Ապրուստի առարկաների գըները խիստ բարձրացել են, եկամուտները՝ սաստիկ նուազել: Հողի հարկը ոչ մի տեղ չեն կարողացել ժողովել: Առաջացել են հողային, բանւորական և քաղաքական անկարգութիւններ: Բանւորները շատ քչացել են, պահանջել են բարձր աշխատավարձ և ոչ մի դատական բանտային և տուգանքի հալածանք չեն կարողացել ստիպել նրանց յետ կենալ իրանց պահանջներից և համաձայնել հին կարգերին: